

06 JUN 2009

07  
F-27

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԲՈՒՆԱՐԱԿԱՆ ՏՈՐԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**ՍՏԱԼԻՆՅԱՆ**

**Ուղևոր**



ՈՐՈՇԱՆ ԱՄՈՐՅԵՐԱԹՈՒՂՈՒ  
ՎԲԱԺԱՆԱՈՐԱԲԻ ԶԱՆԲԱԺԻ

**ԲԱՆԹՂԹԱԿՑԻ**

**ՈՒՍՈՒՅՈՒՄ**

**№ 1**

ՀԲԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՈՒՂԵԳԻՐԻՆԻ

ՀԵՆՐԵԱԿԱՆ

1936 թ. 4

07

F-27



10 MAR 2013

14594

021485

# ԲՈՒՐՈՒ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊԻԶՆԵՐԻՆ, ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԲՈՒՐՈՒ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻՆ, ԽՄԲԱՈՒԼԻ ԸՆԴԱՄՆԵՐԻՆ ՈՒ ԹՂԹԱԿԻՅՆԵՐԻՆ

Պատի թերթերը խոշոր դեր ունեն կատարելու տրանսպորտը յերկրի ժողովրդական տնտեսության կուսուրական ու որինակելի ճյուղը դարձնելու համար մղվող պայքարում:

Այն կայարաններում, ձեռնարկներում, ուղեղը ձանձուրում, վորտեղ պատի թերթը սխտեմատիկ լույս է ընծայել, վորտեղ պատի թերթը կարողացել է իր շուրջը համախմբել ստախանովականներին ու կրիվոնոսականներին, աշտեղ գործը միշտ ավելի հաջող է ընթացել:

Պատի թերթի աշխատանքը մեծ չափով կախված է խմբիկի ու մասնավորապես խմբագրի գործունակությունից:

Պատի թերթը յուրաքանչյուր տեղում հանդիսանում է կուսկազմակերպության որդանը, կուսկազմակերպչի առաջին ոգնականը: Մինչդեռ կան կուսկազմակերպիչներ (Համալի, Արթիկ և այլն), վորոնք մի կողմ են քաշվում պատի թերթից, այդ «ուրիշի գործ» համարելով: Մեր բաժանմունքում ընդհանրապես կուսկազմակերպությունները դեռ լորրովին անբավարար են զբաղվում պատի թերթերով, չեն հետևում լույս տեսած համարներին, չեն լսում պատի թերթերի հաշվետվությունները, չեն ամրապնդում խմբիկները կայուն ու պատրաստված մարդկանցով, չեն հետևում պատի թերթերի ահազանդներին ու մերկացված թերությունների վերացմանը, իսկ յերբեմն ել առանձին տեղերում ուղղակի խեղդում են ինքնաքննադատությունը (տես

«Ստալինյան Ուղեգիր» թերթի № 83 Գաղթածին վորոշումը): Կուսկազմակերպությունները լիովին չեն կատարել Գաղթածին ապրիլի 21-ի վորոշումը (տես «Ստալինյան Ուղեգիր» № 58):

Պատի թերթերի աշխատանքները աշխուժացնելու համար պետք է ուժեղացնել կուսակցական ղեկավարությունը: Այդ պատճառով ել «Բանգյուղթղթակցի ուսուցում»-ի առաջին թերթիկով մենք տալիս ենք «ՊՐԱՎԴԱ»-յի «Рабоче-крестьянский корреспондент» ժուրնալի առաջին համարի «Կուսկազմակերպիչն ու պատի քերքը» հոդվածը:

Կուսկազմակերպիչներն ու պատի թերթերի խմբագիրները պետք է կազմակերպեն այս նյութերի խորացված ուսուցման սիրությունը, հասցնելով այն յուրաքանչյուր կուսակցականին ու թղթակցին:

Այս և հետագա նյութերի մշակման ժամանակ ծագած բոլոր հարցերը հարկավոր է զբաղվող կերպով ուղարկել խմբագրությունը՝ պարզաբանման համար:

Մենք այսուհետև սխտեմատիկորեն հրատարակելու յենք ղեկավարող նյութերի թղթակցների ուսուցման համար: Տեղերում անհրաժեշտ է կազմակերպել այդ նյութերի խորացված ուսուցման սիրությունը:

«ՄՏԱԿԻՆՅԱՆ ՈՒՂԵԳԻՐ»-ի խմբագրություն

## ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊԻԶՆ ՈՒ ՊԱՏԻ ԹԵՐԹԸ

Պատի թերթը տեղում կուսկազմակերպչի աշխատանքի շատ լուրջ միջոցն է: Լավագույն կուսկազմակերպիչները հիանալի կերպով հասկանում են այդ և զբա համար ել ընդհուպ զբաղվում են պատի թերթերով:

Այս միտքը կարելի է պարզաբանել որինակով: «Բանվորագյուղացիական թղթակից» ժուրնալի 1935 թվի № 6 «Յերկու կուսկազմակերպիչ, յերկու պատի թերթ», հոդվածում գրված է այնպիսի կուսկազմակերպչի մասին, վորը վոչ միայն աշակցում է պատի թերթին, այլ և ուղղակի ինքն է առաջ մղում պատի թերթը, վարվում նրա հետ ինչպես իր կուսակցական աշխատանքի ամենանհրաժեշտ դեմքի հետ: Այդ հոդվածում գրված է Կիրովյան յերկաթուղու Զվանկա կայարանի կուսկազմակերպչի մասին: Նրա մոտ «Սկզբ» պատի թերթն սկսել էր թուլանալ: Կուսկազմակերպիչը հարցը դնում է կուսկոմիտեյի նիստին և աշտեղ ասում:

— Մեզ մոտ կայարանում պատի թերթի գործը լավ չէ: Խմբագիրը՝ Մոկիկին հիվանդացել է: Պատի թերթն ուշ-ուշ է լույս տեսնում, հետ է մնում կյանքից: Այս անհանդուրժելի յե: Յես առաջարկում եմ կազմակերպչի կայարանում ամենորյա պատի թերթ: Մենք բավական ուժեր ունենք: Կայարանում 21 ակտիվ թղթակից կա: Արբամովը կարող է խմբագիր լինել: Մոկիկը, Պավլովը, Զոլինը հերթապես խմբագիրներ (յուրաքանչյուր որովս համար): Մնացած ակտիվը կարող է աշխատել խմբագրությունում խմբագրի հետ միասին: Կարելի յե աշխատանքի ներգրավել առաջավորներին:

Յերկու որից հետո կուսկազմակերպիչ Լոպպերը հրավիրել է բանախմբիկների հավաք, ուսուցման սիրել են Պոպասնայա դեպոյի ամենորյա պատի թերթի աշխատանքի փորձը, կազմել ամսվա աշխատանքի պլանը և անցել գործնական աշխատանքի:

Կատարվել է հենց այն, ինչ անհրաժեշտ է: Կուսկազմակերպիչն ինքն է նախաձեռնողը, թղթակցների կազմակերպիչը: Ինքն է բարձրացրել խնդիրը, ինքն է հավաքել թղթակցներին, ինքն է համախմբել նրանց գործի շուրջը: Յեվ զարմանալի չէ, վոր դրանցից հետո պատի թերթը դարձել է իսկապես ամենորյա և մարտական պատի թերթ: «Մեծ ոգնություն է հանդես բերում կուսկազմակերպիչ Լոպպերը պատի թերթին, նա ուշադրություն կարգում է լույս տեսած յուրաքանչյուր համարը, ցույց տալիս թերությունները, խորհուրդ տալիս, թե ինչի մասին գրել:

Մի որ Լոպպերը տեսնում է, վոր թերթը չկա, կանչում է պատի թերթի խմբագիրն— Արբամովին, հարցնում, ինչու այսօր պատի թերթի նոր համար չկա:

— Մոկիկը չի ապահովել թերթի լույս ընծայումը, ասում է Արբամով: Յերեկոյան կուսկազմակերպիչը հրավիրում է պատի թերթի խմբագրի յիստ, Մոկիկին ապատում են հերթապես խմբագրի պարտականություններին, իբրև անդիսցիպլինարի:

Հաջորդ որը կուսակցական ժողովում լսվում է Արբամովի հաշվետվությունը՝ պատի թերթի աշխատանքների մասին:

61071-67



«Յերկու հասկազմակերպիչ, յերկու պատի թերթ» հոգովածում գրված է նաև Զվանկայի գեղոյի կուսակազմակերպիչի մասին: Պատի թերթը գեղոյում միանգամայն աչքաթող է արված:

«Յերբեմի կուսակազմակերպիչ Գուանիկն իր մոտ է կանչում բազմաթիւ բաժնի խմբագիր Տրավուչիկինն և հրամայում նրան.

—Տրավուչիկին, հուլ տուր, քթներեց արյուն բեր, բայց թերթը լույս ընծայիր»:

Այս հրամանները չաշխուժացրին թերթը, և հասկանալի չէ թե ինչու: Կուսակազմակերպիչ Գուանիկը պատի թերթին չի նայում իբրև իր սեփական գործը, վերջինս կուսաշխատանքի մի մասը: Նա պատի թերթի աշխատանքին նա յում է իբրև մի առանձին մաս, իրենից, կուսակազմակերպիչից հեռու ընկած խնդիր, չա պատի թերթին նայում է իբրև մի գործ, վոր հանձնարարված է միայն պատի թերթի խմբագրին: Յեվ հենց զբաղմունքն է Գուանիկի պես կուսակազմակերպիչներին արմատական սխալը: Նա քաղաքացիական այդպիսի կարևոր գործը, վորդիսին պատի թերթն է, վերափոխում է միայն խմբագրին: Մինչդեռ պատի բերրը, նրան ղեկավարելու և ոգնելու գործը յուրաքանչյուր կազմակերպիչի ու կուսակազմակերպության կազմակերպչական ու կուսակցական մասնաձևական աշխատանքի անբաժանելի մասն է:

Մեր կուսակցությունը միշտ սովորեցնում է, վոր Երեք թի գործը կուսակցական գործ է: «Կուսակցական ու խորհրդային մամուլն մասին» իր վորդիման մեջ կուսակցության V III համագումարը մատնանշել է.

«Մամուլը պրոպագանդայի ու կազմակերպման հզոր գննք է, մաս առաների տանալուն խմբերի վրա ներգործելու անփոփոքելնելի միջոց»:

Կարևոր է հասկանալ, վոր թերթը կուսակցական աշխատանքի մի ասպարեզ է: Ուղղակի ցուցում, վոր թերթը կուսակցական աշխատանքի մի մասն է. մենք գտնում ենք, որինտի, կուսակցության XII համագումարի «Պրոպագանդայի, մամուլի և ագիտացիայի մասին» բանաձևում: Այնտեղ ասված է.

«Յեվ վորովհետեւ մամուլն ագիտացիայի ու պրոպագանդայի կարևորագույն միջոցներից մեկն է, վորը միևնույն ժամանակ կատարում է փոխանցողի դեր կուսակցության և բանվոր դասակարգի միջև, ապա XII կուսհամագումարը հանձնարարում է Կենտկոմին՝ կուսակցական աշխատանքի այս ասպարեզի վրա առաջնակարգ ուղադրություն գործնելու»:

Մամուլի գերի կրտսերի ձեռներդրում է ավելընկեր ՄՍՍՍԽԻՆԸ այդ նույն XII համագումարում: Նա ասել է, վոր մամուլը՝

«Անփոքալի կազ և սակզում կուսակցության և բանվոր դասակարգի միջև, վորն իր ուժեղությամբ հավասար է մասնաձևական բնույթի յուրաքանչյուր փոխանցող ասպարատի»:

Յեվ այնուհետեւ ընկեր Մաալինն ասել է.

«Մամուլը միակ գննքն է, վորի ոգնությունը կուսակցությունն ամեն օր, ամեն ժամ խոսում է բանվոր դասակարգի հետ իրեն հարկավոր լեզվով: Կուսակցության և դասակարգի միջև հոգևոր կապեր ստեղծ

ծելու ուրիշ միջոցներ, ուրիշ այդպիսի ձևուն ասպարատ բնության մեջ գոյություն չունին»:

«Մամուլը պետք է աճի վոչ թե որերով այլ ժամերով: Այդ մեր կուսակցության ամենից սուր և ամենից ուժեղ գննքն է»:

\* \*

Այն ամենը, ինչ մենք մինչև հիմա ասել ենք մամուլի մասին, վերաբերում է նաև պատի թերթերին: Զի կարելի պատի թերթերին մոտենալ այնպես, վոր չըսենք իբր թե «մանրիկ թերթեր են, նման չեն տղադիր թերթերին, և դրա համար ել նրանք կուսակցական ղեկավարության առանձին հոգս չեն պահանջում»: Այսպիսի դատողությունն արմատապես սխալ է և վնասակար: Պատի թերթը կայարանում, ձեռնարկում, ուղեղընում, ցեխում, նույնպես ուժեղ գննք է հանդիսանում, վորը կուսակազմակերպության մշտական դադափարական ղեկավարության կարիք ունի: Պատի թերթը — այդ միևնույն բոլորիկյան մամուլն է, և դրա համար ել նրան վերաբերում են մամուլի մասին կուսակցության արած բոլոր դիտողությունները:

Սակայն զբանից բացի պետք է նաև նկատի ունենալ, վոր կուսակցությունը մի քանի անգամ հատուկ ցուցումներ է արել պատի թերթերի մասին:

Կուսակցությունն ամենաառաջ ուղադրությունն է դարձրել պատի թերթերի վրա գեո այն ժամանակաշրջանում, յերբ նրանք նոր էլին սկսել ծնունդ առնել ու աճել: Կուսակցության XII համագումարը (1923 թիվ, ապրիլ) «Պրոպագանդայի, մամուլի և ագիտացիայի մասին» իր բանաձևում պատի թերթերի մասին ասել էր.

«Վորպես նոր յերևույթ կուսակցական — խորհրդային մամուլի ասպարիզում, բանթղթակիցներին ղուղընթաց, հարկավոր է նշել նաև ֆարբիկա-գործարանային թերթերը, վորոնք կենտրոնում սկսում են նշանավոր դեր կատարել: Այդ թերթերն առաջավոր բանվորների ստեղծագործության արդյունքն են հանդիսանում: Նրանց նշանակությունը նրանումն է, վոր յուսաբանելով տեղական ֆարբիկա-գործարանային կյանքի խնդիրները, նրանք զբաղվում իսկ հասարակական կյանքի և արտադրության շահերի մեջ են ներգրավում պրոլետարիատի համեմատաբար ավելի հետամնաց խավերը: Ընդգծելով այդ նոր մամուլի արժեքը, XII համագումարը մատնանշում է այդ կուսակցական ղեկավարության տակ տանելու անհրաժեշտությունը»:

Պատի թերթերի աճման հետ սերտորեն կապված է բանդյուլթղթակիցների աճման գործը: XII կուսհամագումարի բանաձևում այդ առթիվ հետևյալ ցուցումն է արվում.

«Խորհրդային ժուրնալիստիկայի նոր ուժի — բանվորական թղթակիցների նշանակությունը հսկայական է: Կուսակցական կազմակերպություններն ինչպես կենտրոնում, այնպես ել տեղերում պետք է միջոցներ ձեռք առնեն բանթղթակիցների քաղաքական ուսուցման, նրանց համախմբելու և ընդհանուր կուսակցական աշխատանքի մեջ ներգրավելու համար»:

Պատի թերթերի, նրանց զարգացման ու ամրապնդման խնդիրը կու-



սակցութեան կողմից նորից դրվում են XIII կուսհամագումարի «Մամուլի մասին» բանաձևում:

«Պատի թերթերը ձեռք են բերում ավելի մեծ նշանակություն մեր մամուլի սիստեմում, վորպես մասսայի վրա ներգործելու և նրա ակտիվութունը հայտնաբերելու միջոց... Պատի թերթերի աշխատանքները ձեռնարկներում պետք է տարվի կուսընթերցների և կոմյունիստիկական ամենալայն աշակցութեամբ ու ղեկավարութեան տակ: Կուսկոմիտեները պետք է ուժեղացնեն իրենց ղեկավարութեանը պատի թերթերի աշխատանքների վրա:

Անհրաժեշտ են գիտենալ նույնպես բանթղթակիցների մասին յեղած առաջին վորոշումներից մեկի մասին, վոր մենք գտնում ենք XIII կուսհամագումարի նույն բանաձևում:

«Անհրաժեշտ է ամեն կերպ ամրապնդել բանվոր թղթակիցների կազմերը, ու մի նույն կերպ պաշտպանել նրանց կազմակերպչական և բյուրոկրատացումից: Բանթղթակցական կազմակերպության հիմնական ձևը պետք է հանդիսանա նրանց համախմբումը թերթի շուրջը: Կուսակցության ոգնութեանն ու ղեկավարութեանը բանթղթակցական շարժման նկատմամբ պետք է արտահայտվի բանթղթակիցների կոմմունիստական դաստիարակությունն ուժեղացնելու, թղթակիցներ ընտրելու գործում թերթերին ոգնելու, թղթակիցների մեջ քաղուսավորչական աշխատանքներ կազմակերպելու մեջ (խմբակներ, ակումբներ, կարճատև դասընթացներ, համագումարներ և այլն) և բանթղթակցական վորակը բարձրացնելու աջակցելու մեջ: Կուսակցության և պրոֆմիութեան ուշադրության ուժեղացումը յերբեմն չպետք է խնամակալութեան վերածվի (ստորին բջիջների, ֆարգործկոմիտեների գրաքննություն (ցենզուրա) և այլն): Կուսակցության աշխատանքը բանթղթակցական շարժման ասպարիզում պետք է հետապնդի բանթղթակցական աշխատանքի մեջ բանվոր դասակարգի ցարմ կազմեր ներգրավելուն (առանձնապես լենինյան հավաքից) և մասսայի հետ բանթղթակիցների կապի ուժեղացմանն ու ամրապնդմանը, ինչպես արտադրություն մեջ, այնպես և առօրյա կյանքում»:

Յենելով XIII կուսհամագումարի այս վորոշումից Համ(բ)Կ Կենտկոմը 1924 թվի դեկտեմբերի 1-ին հատուկ լայնածավալ վորոշում է հրատարակում «Պատի թերթերի մասին», վորում մատնանշվում է, վոր

«Պատի թերթերի աշխատանքը ձեռնարկներում պետք է տարվի կուսընթերցների և կոմյունիստիկական ամենալայն աշակցության և ղեկավարության տակ»:

Այդ վորոշումը հանձնարարում էր մասնավորապես հրավիրել պատի թերթերի խմբիկների ընդլայնած նիստեր բանթղթակիցների, կուսկազմակերպիչների և ձեռնարկի կարևոր կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, այն հաշվով, վոր այդ նիստերը խմբիկներին հնարավորություն կտան ավելի լավ պատկերացնել ու ըմբռնել ձեռնարկի աշխատանքի առանձին ասպարիզները: Վորոշման մեջ հանձնարարվում էր

խմբիկներին պարբերաբար հաշվետու լինել կուսակցական գնըաց և ընդհանուր բանվորական ժողովներում:

Կուսակցության XIV կոնֆերանսի «Կուսակցական շինարարութեան մասին» բանաձևում նորից ընդգծվում է պատի թերթերի դերը և «պատի թերթերի նկատմամբ, վորոնք ներկայումս հսկայական նշանակություն են ձեռք բերել, ուշադրութեանն ու ղեկավարութեանն ուժեղացնելու» անհրաժեշտութեանը:

1931 թվի մարտին կուսակցության Կենտկոմը «Դյուդական շրջանային ու ստորին մամուլի մասին» իր վորոշման մեջ մատնանշել է, թե անհրաժեշտ է՝

«Ծավալել գարնանացանի ընթացքում պատի թերթերի ցանցը յուրաքանչյուր կոլտնտեսութունում, խորհտնտեսութունում, ՄՏ Կայանում, բնակավայրերում, նրանց վրա կուսակցական ղեկավարութեանն անպայման ապահովելու պայմանով»:

Այդ վորոշման մեջ կա նաև այսպիսի կետ.

«Շրջանի ստորին մամուլը և բանթղթակիցների մեջ տարվող աշխատանքը պետք է ղեկավարեն կուսընթերցները, ակտիվ մասնակցության ներգրավելով կուսընթերցներին ու շրջանային թերթերի խմբագրություններին, աջակցելով ինքնաքննադատության լայն ծավալմանն ու մասսայական աշխատանքի նոր ձևերի ու մեթոդների կիրառմանը (հարվածախնութեան, սոցիալցում, բանթղթակցական բրիգադներ, պոստեռ, ստուգատեսներ, կանչեր, ոպերատիվ տեղեկագրեր և այլն)»:

Ստորին մամուլի աշխատանքները վրա բոլոր կուսկազմակերպությունների ուշադրութեանն է բեմեկում Համ(բ)Կ Կենտկոմն իր 1931 թվի ապրիլի 16-ի «Բանթղթակցական շարժումն վերակառուցելու մասին» իր հայտնի վորոշման մեջ, վորում Կենտկոմը մատնանշում է, թե՝

«Կուսակցական ու պրոֆեսիոնալ կազմակերպությունները հարկավոր ուշադրութեանն չեն դարձնում ստորին արտադրական մամուլի վրա (տպագիր և պատի թերթեր) ձեռնարկներում, ցենսուրում, գնացքներում, խորհտնտեսութուններում, ՄՏ Կայաններում և կոլտնտեսութուններում, հստակ նրան, վոր այդ մամուլը ներկայումս բացառիկ նշանակություն է ձեռք բերում...»:

Ստորին մամուլին իսկական ոգնութեանն և ղեկավարութեանն ցույց տալու նպատակով Կենտկոմը մատնանշել է, վոր

«Պրոֆմիութեանները, կուսկաբինետները, ագիտատորներն ու պրոպագանդիստները պետք է ունեն բանթղթակիցներին ու ստորին մամուլին»:

\* \*

Մենք մանրամասնորեն շարադրեցինք կուսակցության վորոշումներից կարևորագույնները պատի թերթերի նկատմամբ կուսակցության ղեկավարութեան մասին, վորպեսզի ավելի լրիվ պատկերացում տանք մամուլի այդ ասպարեզի նկատմամբ կուսակցության ունեցած վերաբերմունքի մասին:

Անհրաժեշտ է նաև պարզաբանել, թե ինչպես է սովորեցնում կուսակ-



ցուցումները պատի թերթերի նկատմամբ կուսակցության ղեկավարությունն իրացնելը: Այդ ցուցումներին մասին այստեղ հիշատակելն անհրաժեշտ է նաև այն պատճառով, վորովհետև շատ կազմակերպիչներ, հաճախ նաև կուսակցության անդամները այդ ղեկավարությունն անց են կացնում վոյզգայուն, վոյզ ճիշտ, ազդեցություն են կուսակցության ցուցումները ստեղծագործության և ինքնագործնելու իրան համար բանթղթակիցներին և պատի թերթերին ամենալայն նախաձեռնություն և անսահման հնարավորություններ տալու մասին: Կուսակցակերպիչները յերբեմն իրենց խնդիրները պատի թերթերի նկատմամբ նրանում են կարծում, վոր պահանջում են նախագիտ ցույց տալ իրենց առանձին հոգիվածներ, իսկ յերբեմն ել պատի թերթի ամբողջ համարը: Այլ դեպքերում կուսակցակերպիչները պահանջում են իրենց հետ համաձայնեցնել պատի թերթում լույս ընծայելու համար նախատեսված հոգիվածները: Կան փաստեր, յերբ կուսակցակերպիչները իրենցով փոխարինում են պատի թերթերի խմբագիրներին ու խմբիչի անդամներին: Պատի թերթերը կուսակցական ղեկավարությունամբ ապահովելու դիրքակալներին այլ խնդիրներում են կան: Միանգամայն հասկանալի չէ, վոր այդպիսի վարչարարական միջոցներով չեն, վոր հանձնարարում է կուսակցությունը պատի թերթերը կուսակցական ղեկավարությունամբ ապահովել:

Գետք է խստությունամբ ղեկավարվել կուսակցության անց ցուցումով, վոր բանթղթակցական կազմակերպությունների ղեկավարումը

«Յերբեք չպետք է վերածվի անձնական խնամակալության խմբագրի նկատմամբ. չպետք է վերածվի թղթակցությունների գրաքննության, թղթակիցների գործնական, քննադատական աշխատանքին դիմագրելուն և այլն» (Բանթղթակցական շարժման մասին) Համկ(բ)Կ Կենտկոմի 1925 թվի հուլիսի 1-ի վորոշումից):

Այդ վորոշման մեջ պարզաբանվում է, վոր կուսակցական կազմակերպությունները պետք է լիարկանացին իրենց գաղափարական քաղաքական ազդեցությունը նրանց վրա ավելի ճկուն մեթոդներով, խուսափելով վարչական վորեն հարկադրումից: Նրանք պետք է լայնորեն դնեն բանթղթակիցների դաստիարակումը: Անթույլատրելի չէ պատի թերթերի խմբիչներին և բանթղթակիցների գաղափարական դաստիարակության գործը խոչնդել միայն խմբագիրներին: Այդ աշխատանքը (քաղաքագիտության խմբակները, լենինիզմի խմբակներ, կուսակցական տակտիկայի և ծրագրի կուսակցականության խմբակներ և այլն) պետք է կուսակցական անմիջական ղեկավարության տակ լինի:

\*  
\*

Միանգամայն հասկանալի չէ, վոր կուսակցակերպություններն իրացնում են իրենց գաղափարական ղեկավարությունը պատի թերթերի նկատմամբ նաև խմբիչներին միջոցով: Դրա համար ել կուսակցակերպիչի առաջնակարգ պարտականությունն է՝ աջակցել պատի թերթին լավ, միաձուլվ, մարտական խմբիչ տեղեկություն, նրա կազմում լավագույն մարդկանց ընտրելուն: Այլ կերպ կուսակցակերպիչին դժվար կլինի ղեկավարել պատի թերթը:

Թեր: Ինչպես կարող է նա ղեկավարել նրան, յեթե պատի թերթը խմբիչի չունի, այսինքն չկա բանթղթակիցների այն կորիզը, վորը պատրաստում է պատի թերթը և նրա շուրջը համախմբում տվյալ տեղի մնացած թղթակիցներին: Ահա ինչու պատի թերթերի մասին կուսակցության հաճախակի տված դիրքակալներում շարունակաբար ընդգծվում է խմբիչների դերը:

Սակայն պատի թերթերի շատ խմբագիրներն մոռացել են այդ մասին և փորձում են իրենք միայնակ լույս ընծայել պատի թերթերն առանց խմբիչների: Ջարմանալի չէ, վոր այդպիսի խմբագիրներին մոտ պատի թերթից վոյնիչ դուրս չի գալիս: Կուսակցակերպիչը պետք է հետևի նրան, վորպեսզի նրա մոտ ձևոնարկում, ցեխում խմբիչ լինի: Այդ մասին գոյություն ունի շատ արժեքավոր ցուցումներ Համկ(բ)Կ Կենտկոմի 1926 թվի ոգոստոսի 28-ի «Կուսակցության հերթական խնդիրների մասին բանգյուղթղթակցական շարժման մասին» վորոշման մեջ, վորում հանձնարարվում էր կուսակցակերպիչներին խմբիչներն ընտրել:

«Վոյ թե նշանակելու, այլ գաղափարական ներգործման ճանապարհով, վորն ուղղված է այդ աշխատանքի մեջ առավել ակտիվ, քաղաքականապես կայուն և բանգյուղթղթակիցների շրջանում հեղինակավոր ընկերներին ներգրավելուն»:

Այդ վորոշման մեջ առաջարկվում է ստորին կուսակցակերպություններին.

«Պարբերաբար լսել պատի թերթերի խմբիչների կազմի մեջ մշտնոգ կուսակցականների հաշվետվությունները, ինչպես և քննարկել բանգյուղթղթակցական շարժման հերթական խնդիրները»:

Դրանից բացի, այդ վորոշման մեջ առաջարկվում էր շարունակաբար ձգտել բանգյուղթղթակիցների կազմը բարելավելուն, տանել նրանց մեջ քաղաքական դաստիարակչական աշխատանքներ, տալով թերթերին և ղեկուցողները պարապմունքներ ղեկավարներ, աջակցելով պատի թերթի աշխատողներին համար սեմինար կազմակերպելուն, գրախոսություններ ընթերցել, պատի թերթերի ցուցահանդեսներ կազմակերպելուն և այլն:

Այս կապակցությամբ կարելի չէ բերել Մտալինի անվան Մոսկվայի ավտոգործարանի կուսակցական կոմիտեի աշխատանքի փորձից հիանալի որինակ, կոմիտեն մի պլենում հատկացրել է բանթղթակցական աշխատանքի հարցերին: Գործարանային «Կիրովից» տպագրի թերթի խմբագիր ընկեր Միխայլովը «Բանվորա-գյուղացիական թղթակից» ժուրնալի № 23-ում (1933 թիվ) գրել էր.

«Այդ արտասովոր և մեզ համար ուրախալի պլենում եր: Գործարանի կուսակցական կոմիտեն ակտիվի հետ միասին հավաքվել էր բանթղթակիցներին կուսակցական ղեկավարությունամբ ապահովելու հարցի քննարկման համար: Դրան առիթ է հանդիսացել «Բանվորա-գյուղացիական թղթակից» ժուրնալի № 18-ում տպագրված «Բանթղթակցական գործերի մասին» հոդվածը:

Պլենումին հրավիրված ելին պատի թերթերի խմբագիրներն ու կուսանդամ թղթակիցները: Պլենումի բոլոր մասնակիցներին (նրանք մոտ 100 հոգի էլին), նախապես բաժանվել էր ժուրնալի համարը վորում տպագրված էր այդ հոդվածը: Նրա ընթերցումից ել սկսվել է հենց պլենումը:



Գործարանում բանթղթակիցների հետ տարված աշխատանքի մասին համառոտ զեկուցում արեց կուսակցական Կոմիտեյի կուլտպրոպի տեղակալ ընկեր Մուրտովը»:

Այդ պլենումին ծավալված մտքերի փոխանակությունից հետո յեղույթ ե ունեցել կուսակցական Կոմիտեյի քաբուղար ընկեր Սոկոլովը: Կուսկոմիտեյի պլենումը ծավալուն բանաձև ե ընդունել բանթղթակցական աշխատանքի հարցի մասին: Վորոշված ե կարգավորել գործարանի «մամուլի կաբինե-տի» աշխատանքները այնտեղ կազմակերպել զրույցներ, դասախոսություններ ու զեկուցումներ բոլշևիկյան մամուլի, գրականության ու արվեստի հարցերի շուրջը: Պլենումը հանձնարարել ե կազմակերպել մամուլի տեսությունների և թերթերի աշխատանքին վերաբերող հոգվածների քննարկումներ: Պլենումը պարտավորեցրել ե կուսկազմակերպիչներին սխտեմատիկորեն բանթղթակիցների ցեխային ժողովներ գումարել, ոգնել խմբկոնքերին և այլն: Ստալինի անվան ավտոգործարանի կուսկոմիտեյի որինակն արժե ամենալայն կերպով տարածել:

\* \*

Մեր պատի թերթերի կյանքում ամենից հրատապ, ամենից աչրող հարցը թղթակցությունների գործիականության հարցն ե: Յեվ այդ հասկանալի չե: Դրանից կախված ե պատի թերթերի և բանթղթակիցների վող աշխատանքի հաշվողությունը: Շատ դեպքեր կան, չերը պատի թերթերը թուլանում են, դադարում են լույս տեսնել կամ ուշ—ուշ են լույս տեսնում, վորովհետև նրանցում տեղավորված թղթակցությունները, բանվորների առաջարկներն ու ցուցումներն անուշադիր ու անհետևանք են մնում: Յեվ այստեղ ել շատ բան ե կախված կուսկազմակերպիչից: Դրանում ե կայանում ըստ ելույթյան կուսկազմակերպիչի ամենահիմնական խնդիրներից մեկը պատի թերթերի զեկավարման գործում:

«Բանվոր-գուղացիական թղթակից» ժուրնալի 1935 թվի № 1-ում նկարագրված եր Մոսկվայի Որշոնիկիձեյի անվան գործարանի հիմնալի փորձը: Այն ինչ եր գրված աստեղ:

«№ 3 ցեխի կուսկազմակերպությունը հատուկ «յուլյակ» ե առանձնացրել, վորին հանձնարարել ե ստուգել թերթի հոգվածները արդյունքը, վորոնք վերջին ժամանակներս տպագրվել են ցեխի պատի թերթում և գործարանի բազմատիրաժում»:

«Յեույակի» չգրականությունները քննարկվելու չեն ցեխի կուսակցական ժողովում»:

Այս հիմնալի նախաձեռնություն ե: Այդ կարելի չե հանձնարարել բոլոր կուսկազմակերպիչներին, առանձնապես այն դեպքում, չերը ցեխում կան հեղեղու փաստեր պատի թերթում լույս տեսած քննադատական ցուցումների և սատիանտականների առաջարկների նկատմամբ: Այսպիսի դեպքում Որշոնիկիձեյի անվան գործարանի փորձի կիրառումն անպայման ամենադրական արդյունքները կտան:

Լավ ե վարվում «1905 թվի հեղափոխության հիշատակը» Մոսկվայի

գործարանի կուսկազմակերպիչ Ֆիդոտովը, վորի մասին մեղ պատմում են, թե չերը, վոր ցեխում լույս ե տեսնում պատի թերթի հերթական համարը, նա անպայման լրջությամբ կարդում ե թերթը և հետևում հոգվածների հետևանքներին: Այդ նույն գործարանում կուսկազմակերպիչ Պալչինսկին այսպես ե անում: հենց վոր պատի թերթում այս կամ այն խմբակին վերաբերող հոգված ե լույս տեսնում, նա անպայման անց ե կացնում այդ հոգվածների քննարկումը խմբակում, իսկ չեթե հոգվածը վերաբերում ե ամբողջ ցեխին, նա կազմակերպում ե հոգվածի քննարկումը ցեխի ընդհանուր ժողովում:

Այս մեծ հարցի կապակցությամբ հիշեցնում ենք Համկ(բ)ի Կենտկոմի

ցուցումը, արված 1926 թվի ոգոստոսի 26-ի վորոշման մեջ.

«Կուսկոմիտեները պետք ե կարգավորեն բանթղթակցական նյութերի քննարկման գործը, պայքարելով վարչական ու դատական մարմինների կողմից թերթում զետեղված կամ հիմնարկներին քննություն առնելու համար ուղարկված թղթակցությունների նկատմամբ ձևական ու անուշադիր վերաբերմունքի դեմ (բուրժուադատական գրադրությունների ու դրանցով գործի սվաղելու դեմ, քննությունը չհագրգոված մարդկանց հանձնելու դեմ և այլն), ու հետևեն մեղավորներին պատասխանատվության կանչելուն»:

\* \*

Կուսկազմակերպիչի ամենաառաջին պարտականություններից մեկը ամենավճռական ու անխնա պայքարն ե բոլշևիկյան ինքնաքննադատության թշնամիների դեմ: Ամեն մի յեղույթ վոր ուղղված ե ինքնաքննադատության դեմ պետք ե անմիջապես ջախջախիչ հակահարված ստանա, առաջին հերթին կուսկազմակերպության ու կուսկազմակերպիչի կողմից: Սակայն դեռևս կան այնպիսի դեպքեր, չերը կուսկազմակերպիչներն ուշադրություն չեն դարձնում պատի թերթերի կողմից ծավալվող քննադատությունը խեղդելու փաստերի վրա: Ինչպես հայտնում ե «Ջավոդսկոյ գուրոկ» թերթը. «Ջավոդսկոյ գուրոկի քննադատական գործիքային գործարանում այսպիսի դեպք ե չեղել»:

Գործարանի ելքարական ցեխում պատի թերթը տեղավորել ե մի թղթակցություն տեխնիկ Սերգեևի մասին: Թղթակցությունը մեղադրում եր Սերգեևին նրանում, վոր նա կուսկոմ ե բանվորների հետ Կարգալով այդ թղթակցությունը Սերգեևը մակադրում ե պատի թերթի վրա. «Այսպիսի դատարկ բաներ պատի թերթում գրել հարկավոր չե»:

Այս բացառիկ խայտառակություն փաստ ե: Սերգեևն ըստ ելույթյան թքի ե ցեխի բանթղթակիցների չերին: Իսկ կուսկազմակերպիչն ու պրոֆկազմակերպիչն ինչպիսի չեղրակացություններ են արել: Ինչպես գրում ե ելեկտրական ցեխի պատի թերթի խմբագիր Լալուբովը:

«Կուսկազմակերպիչն ու պրոֆկազմակերպիչը, իմանալով այդ փաստի մասին, ինքնաքննադատությունը խեղդողի նկատմամբ վոր մի միջոց ձեռք չեն առել»:

Յես գտնում եմ, վոր այդ գործով պետք ե հետաքրքրվեն գործարանային կազմակերպությունները»:



Խմբագիրը չալուրովն իրավացի չէ։ Սերգեյի արարքը պետք է անմիջապես քննարկվեց ցեխի ընդհանուր ժողովում։ Իսկ ցեխի կուսակազմակերպիչը յերևի այսպես է վորոշել։ «Այդ դատարկ գործ է, ավելի լավ է չանհանգըստացնել նրան։ Այսպես ավելի հանգիստ կլինի։ Յեթե մի վորևե բան պատահեր, ասենք պոլեյին պատի թերթը, կամ ծեծեյին թղթակիցին, այդ ուրիշ բան է, այն ժամանակ կմիջամտեինք»։ Այսպիսի դատողությունները խորհրդային դեմոկրատիան ծավալելու բոլշևիկյան սկզբունքայնությունից հետ ընդհանուր վոչինչ չունեն։ Այսպիսի դատողություններն ոգնում են միայն դասակարգային թշնամուն, բյուրոկրատիան, օպպորտունիստիան, բացարձակում նրանց ձեռքերը պատի թերթերի դեմ, բանթղթակիցների դեմ ու նրանց հալածելու ավելի սուր միջոցների դիմելու համար։

Ցեխի կուսակազմակերպիչը պետք է ուրիշ կերպ վարվեր։ Տեղի ունեցած փաստը պետք է բարձրացվեր սկզբունքային մեծ բարձրություն, վորպեսզի ցեխի յուրաքանչյուր աշխատող քաղաքական անհրաժեշտ դասեր քաղեր։ Գործը միայն նրանում չէր կախում, վորպեսզի Սերգեյը պատվեր, այլ վոր դրա հետ միասին ցեխի ամբողջ հասարակությունը լըջորեն գնահատեր բոլշևիկյան ինքնաքննադատությունն շնանկությունը, վորպեսզի ցեխում ստեղծվեյին այնպիսի պայմաններ, վոր այդպիսի արարք այլևս տեղի չկարողանար ունենալ։

\* \* \*

Պատի թերթերի նկատմամբ կուսակազմակերպությունն անընդհատ ուժեղացնելու համար պետք է պայքարեն նաև իրենք պատի թերթերի խմբագիրները։

Շատ հաճախ այսպես է պատահում, վոր իրենք պատի թերթերի խմբագիրները, ինչպես ասում են, ամիսներով չեն հիշեցնում իրենց մասին։ Մինչդեռ ինքը պատի թերթի խմբագիրը ժամանակ առ ժամանակ պետք է իր հաշվետվությունը դնի կուսօրգովում, կուսկոմիտեյի նիստում։

Այսպես գործելու փոխարեն, պատի թերթերի մի շարք խմբագիրներ վնասակար գիրք են բռնում, ասելով, «Թող իմ մասին, իմ աշխատանքի մասին, իրենք հիշեն»։ Յերբեմն իսկապես տվյալ պատի թերթի մասին «մոռանում են», հենց նրա համար, վոր նրա ձայնը չի լսվում, վոր նա ինքը չի հավաքում իր թղթակիցներին և ինքը խմբելն էլ միայն թղթի վրա գոյություն ունի։ Զարմանալի չէ, վոր պատի թերթերի այդպիսի խմբագիրների մասին, վորոնք վոչ մի բանով աչքի չեն ընկնում, կամաց կամաց մոռացվում են։ Ահա ինչու ինքը պատի թերթի խմբագիրը պետք է միշտ մոտ լինի կուսակազմակերպիչին, հաճախ խորհրդակցի նրա հետ, ծանոթանա նրա աշխատանքների պլանի հետ և այլն։

Հիանալի արդարացրել է իրեն շատ կուսակազմակերպությունների կողմից ձեռնարկներում «բանթղթակցի ուր» կազմակերպելու փորձը։ Հասարակական վորևե այլ աշխատանքներից ազատ այդ որերին կուսակազմակերպիչներն ու պատի թերթերի խմբագիրները հավաքում են բանթղթակիցներին, կազմակերպում պատի թերթի լույս տեսած համարների ու տվյալ պատի թերթի հերթական անելիքներին քննարկում։ Այդ որերին հաճախ կազմակերպվում են բանթղթակիցների միացյալ խորհրդակցություններ անտեսա-

վարների ու ինժեներ-տեխնիկական աշխատողների հետ։

Այդպիսի որերին ամբողջ ձեռնարկի մասշտաբով կարելի չէ կազմակերպել պատի թերթերի ցուցահանդես և նրանց քննարկումը։ Կարելի չէ կազմակերպել պատի թերթերի խմբագիրների ու բանթղթակիցների ինքնահաշվետվություններ։

Բանթղթակցական այդպիսի որերի անցկացումը միանգամայն տպահովված կլինի, յեթե կուսկոմիտեներն ու կուսակազմակերպիչներն իրենց աշխատանքի պլանի մեջ մտցնեն պատի թերթերի թղթակիցների հետ տարվող աշխատանքը։

Պատի թերթերի աշխատանքները ղեկավարելու գործում կուսակազմակերպիչներն մեծ ոգնություն կարող են հասցնել տպագիր թերթում տպագրված մամուլի տեսությունները։

«Մոսկվա—Ինքս մագիստրալի Ստարոոսկոլսկի շինարարական տեղամասի «Պոլիտոտելե» քաղմատիրաժը տպագրել է մամուլի տեսություն «Մագիստրալեց» պատի թերթի մասին։ Մամուլի տեսությունում պատի թերթի աշխատանքներն անբավարար եր ճանաչվել։ Հաջորդ որը խմբելու կազմակերպել եր մամուլի տեսության քննարկումը թղթակիցների և կուսակազմակերպիչի հետ միասին»։

Այսպիսի, լուրջ ուշադրության արժանի փորձի մասին իր պատմված «Рабоче—крестьянский корреспондент» ժուրնալի 1935 թվի № 1-ում։

Մամուլի տեսության քննության գործին կուսակազմակերպիչների կողմից այսպիսի ակտիվ մասնակցություն ցուցաբերելու գործում մամուլի տեսությունները շատ ավելի գործնական են դառնում, քան այն դեպքում, յերբ կուսակազմակերպիչները մամուլի տեսություններով չեն հետաքրքրվում, համարելով նրանց քննադատությունը վոչ իրենց համար, այլ միայն պատի թերթերի համար։ Մինչդեռ այս կամ այն պատի թերթի քննադատությունը մամուլի տեսությունում կուսակազմակերպիչների կողմից պետք է ընդունվի վորպես և իր կուսակցական աշխատանքի թերությունների քննադատությունը։ «Յեթե ասենք վատ է պատի թերթի գործը, ապա բոլոր հիմունքները կան յնթադրելու, վոր կուսակազմակերպիչի մյուս աշխատանքներն էլ են կաղում»,—այսպես է սովորաբար մտածում մամուլի տեսության ընթերցողը։

Յեկ ճիշտ է վարվում նա այդպես մտածելով։ Ցեխի պատի թերթի դրություն հիման վրա կարելի չէ գաղափար կազմել ցեխում յեղած ինքնաքննադատության վիճակի մասին, կուսակցական—մասսայական աշխատանքի և այլի մասին։ Ահա ինչու կարգալով մամուլի քննադատական տեսությունը իր թերթի մասին, լավ կուսակազմակերպիչը կասի ինքն իրեն, «այդ ինձ է վերաբերում», «այդ ինձ էլ է վերաբերում» և այստեղից էլ կանի մոռացած համապատասխան հեռուկությունները։

Հասկանալի չէ, վոր միայն մամուլի տեսություններով չէ, վոր տպագիր թերթի պետք է ոգնի կուսակազմակերպիչներին պատի թերթերը գեղավարելու գործում։ Տպագիր թերթերը պետք է հաճախակի գուժարեն իրենց մոտ խորհրդակցություններ կուսակազմակերպիչների հետ պատի թերթերի



աշխատանքների հարցի շուրջը: Այդ մեծ չափով կոդնի կուսակցականությունը:  
Պակաս կարևոր չէ, որինակ, հրավիրել կուսակցականությունը պատի թեր-  
թերի խմբագիրների խորհրդակցությունը:

\* \*

Այս շուրջից պարզ է, թե ինչպիսի հսկայական նշանակություն ունի  
պատի թերթերի առօրյա վաղափարական ղեկավարությունը ապահովելը:  
Մոռանալ այդ նշանակում է գործն ու պորտոնիստական ինքնահոսի մատնել,  
նշանակում է թուլացնել դասակարգային զգոնությունը: Այնտեղ, ուր պատի  
թերթը չեն ղեկավարում, չեն հետաքրքրվում նրանով, այնտեղ պատի թեր-  
թը հեշտություն կարող է դառնալ խորթ տարրերի գործիքը, այնտեղ  
պատի թերթում կարող են բուն դեմ կուսակցության թշնամիները: Այդ-  
պիսի դեպքեր քիչ չեն յեղել: Փաստեր են յեղել, յերբ պատի թերթերի  
խմբագիրներ ու խմբիղների անդամներ են դարձել դասակարգային թշնա-  
միները, տրոցկիստները, զինովականները, ոգավելով առանձին կուսակա-  
ցականությունների զգոնության բխցումից:

Պատի թերթերն իսկական կուսակցական ղեկավարությունը ապահովե-  
լը կուսակցականության քաղաքական զգայունությունն է և զգոնության տարբա-  
կան արտաբերումն է:

ՀՀ Ազգային գրադարան



NL0142475



746

19594

W. P. 1  
W. P. 0

W. P. 1